

# Կ Ա Ն Տ Ի Ի Մ Ա Յ Ա Բ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն Ը

## V.

### Տրանսցենդենսալ անալիսիկա

(Ուսմունք զուտ մաքի գաղափարների և հիմունքների մասին)

Ա. Գաղափարների անալիսիկա.

1 Եթէ մենք լինէինք միմիայն հայեցող էակներ, մեզ համար աշխարհը կը լինէր ձայների գոյների և այլն զգայութեանց մի ժամանակական և տարածական պատահական և ոչ անհրաժեշտ հիւսուածք, մի հսկայ քառային պատկեր անմիտ ըմբռնութիւնների: Եթէ մենք կանգնէինք մեր աշխարհաստեղծութեան հէնց այդ առաջին քայլի վրայ, այդ գէպքում՝ մենք ոչ մի գաղափար չէինք ունենայ առարկայացման և անհրաժեշտութեան մասին, որովհետեւ ըմբռնութիւնն ու հայեցողութիւնը ինքնըստինքեան չունին իրենց մէջ անհրաժեշտ գաւառորութեան գաղափար: Եթէ մենք սահմանափակուած մնայինք ըմբռնողութեամբ, մենք կարող էինք հաւասարապէս, որ նախ պատկերացնել սենեակի տաքանայը, ապա վառարանի վառելը, առաջ որսի սպանուիլը, ապա արօրդի հրացան արձակելը, և ըմբռնութիւնը ոչ մի իրաւունք չունէր բողոքելու այդ մասին, թէ այդ յաջորդականութիւնը օրեկտիւ և անհրաժեշտ նշանակութիւն չունի, քանի որ օրեկտիւ անհրաժեշտութիւնն ինքը այլ ևս ըմբռնութիւն չէ, այլ մի նոր գաղափար է, որ կցւում, վերագրւում է նոցա:

Սակայն մեր աշխարհը չունի այդ նկարագիրը, — նա երևակայութեան ձեռքին հանգէս չի գալիս որպէս պատկերացումների մի անտրամաբանական և քմահաճ խաղ: Աշխարհը երկաթէ անհրաժեշտականութեամբ օրինակարգուած, — թէ յաջորդականութեան տեսակէտից և թէ իրքեւ կօրրդինացիա՝ միաժամանակութեան տեսակէտից, — մի համակարգութիւն է, ուր ամէն ինչ ունի իւր անհրաժեշտ տեղը և հաղորդակից է ամբողջութեան կեանքին:

Արդ՝ ի՞նչ է զգայական աշխարհի արարչագործութեան մէջ այն Հեռքը, որ անհրաժեշտաբար կապակցում է ըմբռնութիւնները, ի՞նչ է բանականութեան այն ֆունկցիան, որ մեր պատկերացումների այսպէս ազած հեղուկային յեղ-յեղուկութիւնը մակարդում է և մի սեռեալ (фиксирован-ным) մնայուն աշխարհ դարձնում:

Ըմբռնութեանց կապակցման օրէնքներն իրենք այլևս չեն կարող ըմբռնութիւնների լինել, նոքա կարող են միայն հում նիւթ լինել կապակցութեան: Կապակցումն արդէն մտքի ֆունկցիան է:

Երբ միտքը գիտակցութեան մէջ կապակցում է երկու պատկերացումներ, որի ժամանակ մէկը (սուբեկտ) միւսի (օբյեկտիվ) միջոցով է պատկերացւում [սուբեկտ ոչ թէ անմիջապէս է պատկերացւում, ինչպէս ինդուկցիայի շրջանում էր, այլ միջնորդապէս՝ դե սկսւր սիւ], դա կլինի դատողութիւն. իսկ այն օրգանը, որի ֆունկցիան է դատողութիւնը, կանտն անուանում է միտք (verstand). Հայեցողութիւնը տալիս է հատ հատ պատկերացումներ, միտքը կապակցում է այն և մարմնաւորում նոցա դատողութեան մէջ: Զգայականութեան գործն է պատկերացնել, մտքինը՝ մտածել. մտածողութիւնը (мышление) ու դատողութիւնը (суждение) ըստ Կանտի նոյնանում են:

Մտածութեան օրէնքներն ուսումնասիրող գիտութիւնը կոչւում է տրամաբանութիւն. Իմացութեան երկրորդ քայլը, ինչ չափով որ նա մտքի ֆունկցիան է, տրամաբանութեան առարկայ կարող է լինել.—Ահա թէ ինչու է Կանտը իւր ուսումնասիրութեան այդ մասն անուանում լոգիկա:

Մտքի ֆունկցիան անալիտիկ չէ միայն, այլ նաև սինտետիկ: Անալիտիկ դատողութիւնը նոյնութեան օրէնքով է կապակցում պատկերացումները, վերլուծելով նրանց պարունակները և ստորադասելով մի գաղափար (ծաւալի և պարունակի տեսակէտից) միւսին: Իսկ սինտետիկը տարբեր պատկերացումներ է կապում, որոնք ծաւալի և պարունակի կողմից ոչ մի աւրնչութիւն չունին: Անալիտիկ

գատողութիւնը միմիայն գործ ունի գաղափարներին հետ, որոնք արդէն պատրաստի դրուած են, ուստի չի հետաքրքրուած թէ արդեօք դրանք իրականութեանը համապատասխանում են՝ թէ ոչ. տուեալ գաղափարներին մէջ որոշ պարունակ ընդունելով նա նմանութեան օրէնքով ձեռնարկում է դրանց մէջ կապ հաստատել: Գատողութեան նիւթը (բովանդակութիւնը) գաղափարներն են, և որովհետեւ այդ նիւթը կարող է ամէն տեսակ էլ լինել (էմպիրիկ և apriori, իրական անիրական — անհեթեթ), ուստի անալիտիկ գատողութեան ժամանակ մենք նիւթի օրէկտիւ գնահատութիւնը ի նկատի չենք առնում, այլ միայն կապակցման ձևն ենք ի նկատի առնում:— Իմացութեան բովանդակութիւնը նրա խնդիրը չէ, այլ մտածողութեան ձևն ընդհանրապէս: Փորձալ տրամաբանութեան առարկան մտածողութեան ձևն է. նա իմացութեան ձևական ընթացքն է սուսումնասիրում, առանց ուշք դարձնելու բովանդակութեանը: Կանաք ֆորմալ լոգիկային հակադրում է տրանսցենդենտալը, որն արդէն բոլորովին աչքաթող չի անում իմացութեան բովանդակութիւնը, ինչ չափով որ նա կաղմուած է սինտետիկ apriori սկզբունքներից: Տրանսցենդենտալ լոգիկայի առարկան է մտքի apriori գործունէութեան քննութիւնը:

Եթէ փորձ ասելով հասկանանք երևոյթների սինտետիկ կապակցութիւնը գիտակցութեան մէջ, ինչ չափով որ այդ կապակցութիւնն ունի անհրաժեշտ բնոյթ, այդ դէպքում փորձնական գատողութիւնը պիտի տարբերել և հակադրել այն գատողութեանը, որ հիմնուած է սոսկ ըմբռնութեանց վրայ և չունի անհրաժեշտ բնոյթ և որն այդ պատճառով Կանտն անուանում է ըմբռնման գատողութիւն: Ըմբռնութեան գատողութեան ժամանակ մենք երկու պատկերացումներ տրամաբանօրէն կապակցում ենք մտածող սուբեկտի մէջ առանց գործադրելու որեւէ apriori սկզբունք: Եթէ ասեմ օր. «երբ արևը լուսաւորում է, քարը տաքանում է» այս գատողութիւնը ըմբռնութեան գատողութիւն է, որովհետեւ մենք դրանով միայն երկու ըմբռն-

նութեան (արևի լուսաւորութիւնը և քարի տաքանալը) յաջորդական հանգէս դալն ենք նկարագրում. մենք գիտակցում ենք դրանց սոսկ ժամանակական յաջորդականութիւնը, այդ պատճառով էլ դա չունի իւր մէջ անհրաժեշտութիւն, ինչքան էլ յաճախ կրկնուի այդ յաջորդականութիւնը, մենք միայն կարող ենք ասել, որ սովորաբար այդպէս է լինում: Իսկ երբ այդ «ըմբռնութեան դատողութեանը» կցում են որևէ դատողական գաղափար, այնուհետև մենք կապած ենք լինում դրանց անհրաժեշտաբար: Օր՝ երբ ասեմ «արևն է պատճառը քարի տաքութեան» կամ «արևը տաքացրեց քարին» այստեղ արդէն բացի այն բանից, որ այդ ըմբռնութեանց յաջորդականութիւնն ենք գիտակցում, աւելացնում ենք նաև պատճառականութեան գաղափարը և այդպիսով այդ յաջորդականութիւնը անհրաժեշտ դարձնում և անհրաժեշտաբար կապակցում այդ ըմբռնութիւնները: Այն գաղափարները, որոնց ստորագրասելով ըմբռնութիւնները դառնում են փորձնական դատողութիւններ, որ ներկայանում է որպէս ըմբռնութեանց սինտետիկ անհրաժեշտ և ընդհանուր միութիւն, այդ դատողութիւնները զուտ դատողական գաղափարն են երևում, որոնց շնորհիւ է, որ աշխարհը ըմբռնութիւնների մի քառս չէ, այլ անհրաժեշտորէն օրինակարդուած և առարկայացած մի բան:

Սակայն գաղափար ասելով չպիտի հասկանալ սեռային գաղափար: Սեռական գաղափարը վերացւում է մանուկի ըմբռնութիւններից և վերաբերում է առարկաներին, իրերին (հատ հատ ըմբռնութեանց), մինչդեռ, օր՝ պատճառականութեան գաղափարի տակ մենք չենք կարող հասկանալ առարկաներ, որոնց նա վերաբերում է: Դա կապակցող սկզբունք է, որը ոչ թէ պատկերացւում է, այլ մտածւում:

Այդ գաղափարներն *aposteriori* լինել չեն կարող, որովհետև անհրաժեշտ բնոյթ ունին և մեր փորձնական իմացութեան հիմքն են կաղմում, առանց որոնց հնարաւոր չէր լինի փորձը: Եւ հարկ է, այդ գաղափարների

տրամաբանական պարզութիւնը հնարաւոր է միայն փորձի մէջ կիրառելուց յետոյ. սակայն նրանցից օգտուելը, որպէս ժամանակի և տարածութեան մէջ գտնուող երևոյթների սինտետիկ միութեան պայմանից, փորձի հիմքն է. ուստի և *a priori* պիտի կանխէ փորձին» (Критика ч. разума երես 148 Локкիի-ի թարգ.)։ Այդ կապակցող *a priori* գաղափարները կատեգորիաներ է կոչում Կանտը։ Տրանսցենդենտալ անալիտիկայի խնդիրն է նախ գուրա բերել և հաստատել փորձի (Բնագիտութեան) *a priori* սինտետիկ այդ հիմքերի ամբողջ սիստեմը, ապա տալ նրանց գործադրութեան սկզբունքները։

Մենք տեսանք, որ դատողութիւնը երկու պատկերացման կապակցութիւնն է գիտակցութեան մէջ։ Բոլոր դատողութիւնների տրամաբանական մոմենտները են զանազան հնարաւոր ձևերը կապակցելու պատկերացումները գիտակցութեան մէջ։ Կատեգորիաներն ուրիշ բան չեն, եթէ ոչ երկու պատկերացմանց սինտետիկօրէն կապող սկզբունքներ, ուրեմն այնքան կատեգորիա կարող է լինել, ինչքան որ կապակցութեան ձև կայ ընդհանրապէս. ուստի ֆորմալ լոգիկայի դատողութեանց ցանկը, որ ներկայացնում է կապակցութեան (դատողութեան) բոլոր հնարաւոր մոմենտները, կարող է ուղեցոյց լինել՝ կատեգորիաների աղիւսակը կազմելու։ Արիստոտէլի կազմած կատեգորիաների ցանկը թերի է և անսխառ, շնորհիւ այն բանի, որ նա չունի ուղեցոյց մի սկզբունք, այլ պատահականօրէն կազմած մի թուարկութիւն է և կարող էր միայն դրդիչ հանգիստանալ յետագայ աւսումնասիրողի համար՝ փոխանակ մի այգպիսի վայրիվերոյ կոյտի (ագրեգատ) մի լիակատար սիստեմ ստեղծելու։

Եթէ մտածողութեան զուտ ձևերն ստանալու համար նրանից հեռացնենք նրա էմպիրիկ բովանդակութիւնը, կըստանանք զուտ դատողութիւնները, — այսինքն սուբեկտի և պոբեկտի կապակցման բոլոր հնարաւոր ձևերը։ Երբ մենք ինկատի առնենք միայն սուբեկտը, այն էլ անկախ նրա էմպիրիկ բովանդակութիւնից, այդ դէպքում

տրամաբանորէն կմնայ միայն նրա ծաւալը, — մեծութիւնը՝ դատողութեան քանակը: Սուբեկտը ծաւալի կողմից կարող է լինել ընդհանուր (ամէն S), մասնակի (մի քանի S), և եզակի (այս S): Սուկ ձևի տեսակէտից ընդհանուրն ու եզակինը իրարից չեն տարբերւում, որովհետև երկու դէպքումն էլ S իր ամբողջ ծաւալով է ստորադասուում P-ին. սակայն նորա իմացական արժէքի տեսակէտից տարբեր են. ուստի ֆորմալ լոգիկան կարող է այդ ինկատի չառնել, բայց տրանսցենդենտալ տրամաբանութիւնը պէտք է ընդհանուրին առանձին տեղ տայ և տարբերէ եզակինից: Այսպիսով կստացուի. —

1. քանակ.

ընդհանուր (ամէն  $S = P$ )

մասնական (մի քանի  $S - P$ )

եզակի (այս  $S - P$ )

Եթէ մենք վերցնենք P և ինկատի առնենք, որ՝ նա S-ի յատկանիշն է կամ յատկութիւնը, — դա կլինի դատողութեան սրակը: P-ն կարող է վերագրուել S-ին, այդ դէպքում դատողութիւնը կլինի դրական, մերժուել՝ այդ դէպքում դատողութիւնը կլինի բացասական, կամ սահմանափակելով բացասումը միայն P-ով վերագրել S-ին ամէն միւս հնարաւոր պրեդիկատներ՝ կստացուի անվերջ դատողութիւն: Վերջին տեսակի դատողութիւնը ֆորմալ լոգիկան կարող է դրական համարել, որովհետև S-ին դրականապէս վերագրւում է ոչ  $P -$  սակայն տրանսցենդենտալ լոգիկան ինկատի առնելով դրանց տարբերութիւնը իմացական արժէքի տեսակէտից՝ պիտի դանադանէ դրանց: Այսպիսով կը ստացուի. —

2. սրակ.

դրական ( $S - P$ )

բացասական ( $S \nless P$ )

անվերջ ( $S = \text{ոչ} - P$ ).

Եթէ ինկատի առնենք P-ի յարաբերութիւնը դէպի S՝ կստացուի դատողութեան տրամաբանական յարաբե-

բութեան ձեռք, Այդ յարաբերութիւնը կարող է լինել՝ ա. սուբստանցիայի և ակցիդենցիայի, բ. հետեանքի և պատճառի, գ. սեռի և տեսակի յարաբերութիւն, կըստացուի

3. յարաբերութիւն.

անպայման (S—P)

պայմանական (եթէ S—P, ապա

ուրեմն A—B-ի)

անջատական (աստիճանով S—կամ

P կամ A կամ B),

Եթէ ի նկատի առնենք, թէ ինչ ձևով են կապակցում S և P մեր իմացութեան համար, կըստանանք դատողութեան

4. եղանակը.

հնարաւոր (S կարող է P լինել)

իրական (S իրօք P է)

անհրաժեշտ (S անհրաժեշտաբար P է):

Սրանք են դատողութեան հնարաւոր ձեւերը. — դրանց համադաստասիւանում է կատեգորիաների ցանկը,

1. քանակ

միութիւն,

բազմութիւն,

ընդհանրութիւն.

2. որակ

իրականութիւն

բացասութիւն

սահմանափակումն

3. յարաբերութիւն

սուբստանցիա — ակցիդենցիա

պատճառ — հետեանք

փոխադրեցութիւն

4. եղանակ

պարզեմատիկ

իրական

աղօղիկ

Այս տառերկու կատեգորիաներից առաջին երկու խումբը մատեմատիկական են, որովհետեւ դործունին մեծութիւնների (հայեցողական) հետ, վերջին երկուսը՝ դինամիքական, որովհետեւ նրանք վերաբերում են գոյութեան և գործողութեան ձևին:

Արդէն վաղուց է նկատուած, որ կանտի ճիշտիկայի այդ ստեղծագործող և ամենախորտեղը միաժամանակ և ամենաթոյլն է, որ ոչ մի առնչութիւն չկայ կատեգո-

րիաների և ֆորմալ լոգիկայի ցանկի մէջ: Այդ երևում է նրանից նախ՝ որ կատեգորիաների ցանկը լրիւ ստանալու համար (և որովհետեւ միանգամ արդէն ընդունուած է թէ դատողութեան ձևերի և կատեգորիաների մէջ զուգընթացութիւն կայ) կանտն ստեղծում է դատողութեան նոր ձևեր և իրողութիւնը ճնշելով բռնազբօսիկ կերպով յարմարեցնել է ուղում դրանց: Երկրորդ՝ կատեգորիաներ կան, որոնք համարեա բոլորովին արժէք չունին: Երրորդ՝ երբ համեմատենք գլխաւոր կատեգորիաները, կը տեսնենք՝ որ դրանց միջև բնական խոր անդունդներ կան և որ այդ պատճառով մէկից միւսն անցնելիս ստիպուած ես ուստիւններ անել: Այդ իլլիւզիան միայն արտաքին նմանութիւնիցն է ծագել: Կատեգորիաները սինտետիկ դատողութիւններ են, մինչդեռ միւսներն՝ անալիտիկ, և ինչ չափով որ մտքի սինտետիկ սկտը չի կարելի արտածել անալիտիկից, նոյն չափով էլ կատեգորիաները չի կարելի արտածել դատողութեան ձևերից: Բայց պէտք է տեսլ, որ այն ամենախոշոր գիւտը մտքի աշխարհում, թէ մեր ընտելեան հիմքում կան *a priori* սինտետիկ սկզբունքներ (կատեգորիաներ), դրանով իր արժէքը չի կորցնի:

2. Այժմ մենք օնինք կատեգորիաների ամբողջ ցանկը: Արդ հարց է ծագում՝ ինչպէս դրանք կարող են *a priori* հիմք լինել փորձի, — հարցը նրանց իրաւասութեան մասին է այժմ:

Բնագիտութիւնը հնարաւոր է միայն այդ սկզբունքների շնորհիւ, իբրեւ փորձի բոլոր իրերի գումարի՝ ընտելեան մասին գիտութիւն: Ուրեմն հարցը կարելի է դնել այսպէս. — ինչպէս է հնարաւոր բնագիտութիւնը, Բնութիւնը գումարն է հնարաւոր փորձի բոլոր օրինակարգեալ աւարկաների, ուստի բնագիտութեան հնարաւորութեան մասին տրուած հարցը նոյնանում է այն հարցին, թէ ինչպէս է հնարաւոր նոյն ինքը ընտելութիւնը իբրեւ օրեկտիւ (անհրաժեշտ) աշխարհաստեւում: Այդ հարցերի պատասխանը կը տրուի, եթէ հիմնական հարցին, — ինչպէս կարող են կատեգորիաները *a priori* հիմք լինել փորձի, — պատաս-

խան տրուի։ Այդ հարցը դնում է և լուծում Վճռանս-  
ց են դ են տ ա լ դ ե դ ու կ ց ի ա նս։

Նախ—Կանտեան դոգմատիկ փիլիսոփայութիւնը  
դրանց (կատեգորիաներին) համարում է ինքնին իրակա-  
նութեան վերաբերուող բաներ։ Պատճառաբանութիւնը  
ուէ ա լ ու ժ էր, սուբստանցիան՝ էութիւն ինքնին իրա-  
կանութեան և ին։ Կանտը շուռ տուեց այդ դոգմատիկ  
հասկացողութիւնը և ապացուցեց, որ դրանք փորձնա-  
կան իմացութեան (գիտական) a priori սկզբունքներ են,  
տրամաբանական միութիւն (единица)։

Իմացութիւնը իրի և պատկերացման համաձայնու-  
թիւնն է։ Այդ համաձայնութիւնը կարող է Յ հնարաւոր  
ձևով լինել. — ա. կամ պատկերացումն է համապատասխա-  
նում իրին, բ. կամ նախասահման ներդաշնակութեամբ մի  
երրորդ Չեռք (Աստուած) դրանց իրար յարմարեցրել է և  
կամ վերջապէս իրն է համապատասխանել պատկերացմանը։

Առաջին դէպքում կատեգորիաները պիտի՝ վերա-  
բերուէին, իսկ այդ դէպքում նրանց իմացութիւնը կը  
քաղուէր փորձից և նրանք կլինէին էմպիրիկ a posteriori  
դադափարներ, որովհետեւ նրանք պիտի սահմանափակուեն  
իրի ներկայութեամբ, և թէև մենք կարող կը լինէինք երե-  
ւակայութեամբ տարածել այն ուրիշ դէպքերի վրայ, բայց  
այդ օրեկափու նշանակութիւն չէր ունենայ՝ դրանց նշա-  
նակութիւնը դէպի յետ, դէպի անցեալ (ունեցած դէպ-  
քերը) կարող է տարածուել, բայց ոչ երբէք նրանցից  
դուրս՝ բոլոր հնարաւոր փորձերի վրայ։ Այդ դէպքում  
կարող էր պատահել, որ յանկարծ մի դէպք լինէր ա-  
ռանց պատճառի, կամ սուբստանցիայի քանակը ուելա-  
նար կամ պակասէր և մի բան ոչնչից ստեղծուէր, կամ  
ոչինչ դառնար կյն, և մենք այսպէս մտածելով փորձի  
դէմ մեղանշած և սխալուած չենք լինի, չէ որ ըստ Կանտի  
չկայ անհրաժեշտութիւն։ Այսպիսով կատեգորիաների  
ապրիորի անհրաժեշտութիւնը անբացատրելի կը մնար։ Ու-  
րեմն այդ տեսութիւնը հիմնովին սխալ է։ Բայց կարող են  
էլի նախասահման ներդաշնակութիւնը մէջ բերել և ասել,

որ կաջրեգորիաները էլի կմնան ապրիորի, բայց ի բնէ անտի  
այնպէս է ստեղծուած և յարմարեցրած մեր բանականու-  
թիւնը, որ նրա ապրիորի ձևերը միաժամանակ և ներ-  
կայացնում են ինքնին աշխարհի օրէնքները, Սակայն կանաք  
վաղուց էր հրաժարուել այդ անհիմն հրաշքից:

Այսպիսով առաջին երկու տեսութիւնները սխալ են,  
որովհետեւ ստիպուած են դէմ գնալու փորձի հնարաւո-  
րութեան սկզբունքներին: Մնում է ճշմարիտը երրորդ-  
վերջին հնարաւոր տեսութիւնը, ըստ որի, իբր ինքը պիտի  
համակերպի մեր պատկերացումներին (մտքին): Այս դէպ-  
քում, ի հարկէ, խօսքն այլևս ինքնին իրերի մասին չի  
կարող լինել, այլ երեւոյթների, այսինքն զգայական պատ-  
կերացումների (ըմբռնութեանց) այդ անհուն զանգուածի,  
որ մենք անուանում ենք բնութիւն, զգայական աշխարհ:  
Միմիայն այս դէպքում կարելի է հասկանալ, թէ ինչ-  
պէս հնարաւոր է *a priori* խմանալ բնութիւնը: Սրանով  
վերացւում է նախկին խորխորատը բնութեան և իմա-  
ցութեան, սուբեկտի և օբեկտի միջից, և բնութիւնը դառ-  
նում է օրինակարգեալ օբեկտիւացում: Այդ օրինակար-  
գութիւնը մայնում է բանականութիւնը, դրանով բանա-  
կանութեան օրէնքները միաժամանակ և դառնում են  
բնութեան ամենարնգհանուր օրէնքները: Իւր ստեղծած  
աշխարհում անպայման օրէնագիրն ինքը բանականութիւնն  
է, ճիշդնականութիւնը ոչ թէ օրէնքները քաղում է բնու-  
թիւնից, այլ թելադրում է նրան:

Բանականութեան բնութիւն ստեղծագործելու տեղը  
սինտետիկ է, սա անհրաժեշտ սինթէզի է վերածում  
զգայութեան տուեալները: Այդ սենթէզն երեք գլխաւոր  
մօմենտ ունի. — իւրացումն և (*apprehension*) վերարտադրու-  
թիւն (*Reproduction*) և վերիմացութիւն (*Recognition*):  
Իւրացումը արւում է հայեցողութեամբ, վերարտադրու-  
թիւնը — երեւակայութեամբ, իսկ վերիմացութիւնը գաղա-  
փարներով: Մի զգայական իր համագրելու համար, օր-  
մի կէսօրից միւս կէսօր անցած ժամանակամիջոցը մտա-  
ծելու համար նախ անհրաժեշտ է մի առ մի իրար ետեից

խրացնել (УХВАТИ) այդ ժամանակամիջոցի մասերը, այնուհետև վերադարձնել դոցա յիշողութեան մէջ, որովհետև եթէ իւրաքանչիւր քայլափոխում՝ մտանամ նախկին իւրացրածներս, այդ դէպքում չեմ ունենայ ամբողջի պատկերացում. վերջապէս՝ երրորդ դիտակցել վերջին անգամ, որ դրանք նոյն նախկին ըմբռնութիւններն են, ինչ որ մենք իւրացրինք: Առանց սենթէզի այս երեք մոմենտի հնարաւոր չէ թէ իրի պատկերացումը, և թէ մինչև անգամ ամենահիմնական եզական *a priori* պատկերացումները՝ ժամանակն ու տարածութիւնը:

(շարունակելի)

Յ. Յ.

### ՊԵՂՈՒՄՆԵՐ ՄԻՋԻՆ ԱՍԻԱՅՈՒՄ

«Россія» ում, № 1679, հարդում ենք.

«XX դարը, ասում է Temps, հարստացել է հնախոսական դանազան դիւտերով: Շամպոլիոն, Վեմլեդա, Բելլերոֆ, Օպպերտ և նրանց դործակիցները պատռեցին Նդիպտոսի, Չինաստանի, Հնդկաստանի, Պարսկաստանի և Ասորեստանի դադանիւրը: Հասաւ հերթը Միջին Ասիային: Պամիրից դէպ ի արևելք, Հնդկաստանի, Ռուսաստանի և Չինաստանի միջև եղած ընդարձակ տարածութիւնը բաժանուած է երկու մասնի, դէպ ի հարաւ՝ Տիբեթի բարձր սարահարթը, դէպ ի հիւսիս՝ չինական Փուրքեստանի աւաղոտ անապատը:

Տիբեթում իշխում է բուդդայականութիւնը, Փուրքեստանը պատկանում է մահմեդականութեան, բայց մինչև այդ դաւանութիւնը, այնտեղ շատ դարերի ընթացքում ծաղկում էր Բուդդայի վարդապետութիւնը: Քրիստոսի ժամանակ այս երկրով երկու ճանապարհ էր հարթուած, և վաճառականները, և միսիօններները, և ուխտաւորները դանազան հողմերից խմբւում էին այնտեղ: Այժմ՝ ամայութիւն է այդ տեղ, ուր երբեմն՝ բարդաւաճումն էր, որի մասին տեղեկութիւն կայ միայն չինական ընդ իրներէից (տեկոս):

Բայց մօտիկ ժամանակներումս կատարուեցին այնպիսի դիւտեր, որոնք ընդհանուր ու շաղկրութիւն են դրաւել: Հետազօտողները Սվեն Խեդինի առաջնորդութեամբ դտան Միջին